2126.7/1139

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«17» 02 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ0033-21

Ձեռնարկողը՝ ***«Գևորգ Անուշ» ՍՊԸ***
գ. Գեղհովիտ, փող. 5, տ. 54

Գործունեությունը՝ ***Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Ամուրքար»տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0033-21

< 17 > 02 2021թ.

Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Ամուրքար» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Գևորգ Անուշ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Գեղհովիտ համայնք

Ներածական մաս. Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Ամուրքար» տեղամասը գտնվում է Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի վարչական տարածքում և տեղակայված է Մարտունի-Վարդենյաց լեռնանցք-Գետափ ավտոմայրուղու աջ մասում, Գեղհովիտ գյուղից մոտ 3.0կմ դեպի հարավ-արևմուտք և զբաղեցնում է 2.2հա մակերեսով տարածք: Ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի հողերը գյուղատնտեսական նշանակության արոտավայրեր են:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է՝ պարզել տեղամասի վերին շերտի խիստ ճեղքավորված բազալտների պիտանելիությունը շինարարական խճի ու ավազի արտադրության, իսկ ստորին շերտի թարմ բազալտներինը՝ բլոկների՝ 8267-95 ՀՍՏ ԳՈՍՏ-ի, 8736–95 ՀՍՏ ԳՈՍՏ-ի և 9479-2011 ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջներին համապատասխան:

Ուսումնասիրվող երևակման ծայրակետային կոորդինատներն են՝ ARM_WGS-84 կոորդինատային համակարգով.

ՀՀ ԲՆՕՍՏ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲՆՕՍՏ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆՕՍՏ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

	X	Y
1	4437962	8523410
2	4437982	8523595
3	4437837	8523547
4	4437842	8523397

Հանքավայրի հետախուզման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնվել օգտակար հանածոյի մարմնի ձևաբանությունը, տեղադրումը, դիրքը, երկրաբական կառուցվածքը, տեղամասի լեռնատեխնիկական պայմանները, չափերը, ռելիեֆի առանձնահատկությունները:

Նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել 1:500 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 2.2հա մակերեսով տարածքում՝ բոլոր հետախուզական փորվածքների գործիքային տեղադրմամբ:

Տեղամասի 1:500 մասշտաբի տոպոգրաֆիական հիմքի վրա կատարել երկրաբանահանույթային աշխատանքներ՝ երկրաբանական քարտեզի կազմմամբ:

Հորատանցքերը նախատեսվում է հորատել օգտակար հանածոյի մարմնի բազալտների շերտի լրիվ հզորության որոշման և նմուշարկման համար: Աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի 112 և 93մմ տրամագծերով կարծր համաձուլվածքային թագիկներով՝ ՍԿԲ-4 մակնիշի ինքնագնաց հաստոցով: Նախատեսվում է հորատել թվով 5 հորատանցք, որից 4-ը՝ 12մ, 1-ը՝ 15մ խորությամբ, ընդամենը 63 գծ.մ ծավալով: Բոլոր հորատանցքերը կենթարկվեն հանուկային նմուշարկման: Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հորատանցքերի հորատահանուկները և փորձնական հանույթի բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները ըստ տեսակների հետևյալն են ՝

- հորատհանուկի փաստագրում - 63 գծ.մ,
- փորձնական բացահանքի փաստագրում - 10մ:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման նպատակով նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում 10x5x3մ չափերով՝ 50մ^2, 150մ^3 ծավալով, որից 100մ^3 դելյուվիալ առաջացումներ ու փուշտա և 50մ^3 չհողմահարված թարմ ապարներ: Վերջիններից կկատարվի փորձնական հանույթ պիտանի բլոկների ելքի որոշմամբ: Փորձնական հանույթը կկատարվի էքսկավատորով: Լրացուցիչ տարածքներ չխախտելու նպատակով փորձնական հանույթը կիրականացվի արդեն գոյություն ունեցող բացահանքից:

Թարմ բլոկներից երեսապատման սալիկների ելքը որոշելու նպատակով նախատեսվում է փորձնական սղոցման ենթարկել մինչև 35.0մ^3 ծավալով կոպտամշակված տարբեր կարգերի բլոկներ: Փորձնական սղոցումը կիրականացվի Գեղհովիտ գյուղի մոտակայքում գործող «Գևորգ-Անուշ» ՍՊԸ-ի սեփական քարամշակման արտադրամասում: Բլոկները քարամշակման արտադրամաս կտեղափոխվեն վարձակալված ավտոինքնաթափով:

Բազալտները նախատեսվում է ուսումնասիրել որպես երեսապատման և շինարարական խճի ու ավազի ստացման հումք: Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և փորձնական բացահանքից:

ՍՊԸ «ԷՆՎԻՐՈՆՄԵՆԹԱԼ ԷՔՍՊԵՐՏԻԶՆԵՐ» ՍՊԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է՝

- հորատահունուկի նմուշարկումը (սեկցիայի երկարությունը մինչև 5մ) իրականացնել անընդհատ տիրույթներով - 12 նմուշ,
- մենաքարի նմուշ բացահանքից - 1 հատ (20x20x20սմ),
- քիմիական կազմը որոշելու նպատակով - 2 նմուշ,
-քարաբանական կազմի ուսումնասիրություն - 2 նմուշ,
- համախառը նմուշ - 1 նմուշ 200կգ զանգվածով,

Ընդամենը 18 նմուշ:

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում:

Տեղամասի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով հորատման ընթացքում նախատեսվում են համապատասխան դիտարկումներ, հաշվի առնելով տեղամասի հետագա շահագործման հնարավորությունը:

Գրունտային ջրերի հայտնաբերման դեպքում ծրագրում կկատարվի լրացում՝ դրանց ուսումնասիրության համար, ինչը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից:

Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու են ռադիոակտիվ տարրերի պարբերաբար ուսումնասիրություններ՝ 20 օրը մեկ իրականացնելով ռադիոմետրիկ էտալոնացման ու զգայունության ստուգում:

Հորատման ժամանակ կօգտագործվեն գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները: Նախատեսվում է 5 հորատման հարթակների հարթեցում մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում: Այս աշխատանքների ծավալները ստորաբաժանվում են՝ 5 հորատման հարթակ: Մեկ հորատման հարթակի մակերեսը կկազմի 40մ^2: Ընդհանուր մակերեսը կկազմի՝ 40x5=200մ^2: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Անմիջապես երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, բնության հուշարձաններ հաշվառված չեն: Մոտակա բնության հուշարձանը Արմաղան հրաբխային կոնն է, որը գտնվում է երևակումից մոտ 5կմ արևմուտք:

Հեռավորությունը երևակման տարածքի և ամենամոտ գտնվող մշակութային հուշարձանի միջև կազմում է ավելի քան 2,8կմ: Հաշվի առնելով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մեթոդաբանությունը, կարելի է փաստել, որ ծրագրավորվող ընդերքօգտագործման աշխատանքները որևիցե ազդեցություն չեն թողնելու հուշարձանների վրա:

Հողի վերին հողաբուսական շերտի պահպանության նպատակով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հողի շերտը, ամբողջ հզորությամբ /0.2մ/, հանել, պահեստավորել հորատահարթակի հարևանությամբ, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով, հետ փռել: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է հորատահարթակների և փորձնական բացահանքի մակերեսներից: Հողաբուսական շերտը վերականգնվում է 0.2մ

շերտով: Վերականգնման ենթակա փորվածքների ընդհանուր մակերեսը կազմում է 5x40+50=250մ^2: Վերականգնման ամբողջ ծավալը կկազմի 250մ^{2}x0.2մ=50մ^3: Վերականգնումը կատարվելու է ձեռքով III-րդ կարգի գրունտներով: Ռեկուլտիվացիայի գումարը կկազմի 50մ^{3}x2500 դրամ = 125 հազ. դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը՝ հորատման հարթակները և փորձնական բացահանքը կկազմի՝ 5x40+50=250մ^2 կամ 0.025հա: Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքներին կկազմի. 0.025հա x 2500 դրամ = 62.5 հազ. դրամ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- տարածքում աշխատող տեխնիկան կլիցքավորվի մոտակա լիցքավորման կայանում՝ բացառելով տարածքում նավթամթերքների պահեստավորումը,
- դիզելային շարժիչների սպասարկումը կկազմակերպվի տեխ. սպասարկման կայաններում,
- կենցաղային աղբը կտեղափոխվեն մոտակա աղբահավաք կետեր,
- տարածքում աշխատող տեխնիկան կպահվի սարքին վիճակում և կունենան արտազտվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ և ձայնախլացուցիչ սարքեր,
- փոշենստեցման նպատակով կկատարվի փոշեառաջացման օջախի մուտքային ավտոճանապարհի ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին: Ջուրը նախատեսվում է բերել համապատասխան ջրօգտագործման պայմանագրերի համաձայն՝ Գեղհովիտ գյուղի ջրամատակարարման ցանցերից,
- կեղտաջրերը կհավաքվեն հորատիպ զուգարանում, ինչը կդատարկվի հատուկ ծառայության ուժերով,
- անվտանգության նկատառումներից ելնելով նախատեսվում է աշխատանքների իրականացման տարածքների մեկուսացում/ցանկապատում/: Հարակից համայնքների բնակիչների անվտանգության ապահովման նպատակով տեղամասի եզրագծով, մուտքային ճանապարհների մոտ՝ հորատհարթակների անմիջական հարևանությամբ կտեղադրվեն զգուշացնող ցուցանակներ: Փորձնական բացահանքի տարածքը կերիզվի փշավոր մետաղալարով,
- կենդանական և բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումները կկատարվեն ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781 որոշման դրույթներին համապատասխան,
- տեղամասի տարածքում կենդանական աշխարհի ներկայացուցիչների բներն ու բնադրավայրերը չեն դիտարկվել: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կարճատև են, ծրագրավորվող աշխատանքները փոքրածավալ: Շրջանի կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցման նպատակով նախատեսվում է սարքավորումները աշխատացնել բացառապես սարքին վիճակում՝ ապահովելով նորմատիվ փաստաթղթերով սահմանված աղմուկի նվազագույն մակարդակը,
- աշխատանքների ավարտից հետո կկատարվի խախտված տարածքների ռեկուլտիվացիա, հետ փռված ապարները կփխրեցվեն, ինչը թույլ կտա ապահովել նոսր

բուսականության արագ վերարտադրությունը և բնական լանդշաֆտային պայմանների վերականգնումը:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Գևորգ Անուշ» ՍՊ ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, հետախուզական փորվածքների անցման շրջանում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի, մասնավորապես, չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,
- տրանսպորտային միջոցների օգտագործված քսայուղերով հայցվող տեղամասի հողերը հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով կիրականացվի հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:

Պատճառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության, էկոնոմիկայի նախարարությունները, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է ապահովել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված նորմերի կատարումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գևորգ Անուշ» ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի «Ամուրքար» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան